ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 1-Ա

ՌՈՍՏԱՄ ԿՇՏԱԵՎԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, նկատի ունենալով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և բավարար է անվտանգ շահագործման համար և հիմք ընդունելով սեփականատեր Ռոստամ Կշտաևի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում 04-094-0109-0047 կադաստրային համարով Ռոստամ Խալոյի Կշտաևին սեփականության իրավունքով պատկանող 0.003 հա մակերեսով հողամասի վրա ինքնակամ կառուցված 30.0 քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակը, ծածկը և աստիճանահարթը՝ համաձայն «Կարեն Մաչանյան,, Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների հատակագծի:
2. Ինքնակամ կառույցների օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետրի համար՝ 2600 դրամ, վճարման ենթակա գումարը կազմում է 78 000 (յոթանասունութ հազար) ՀՀ դրամ:
3. Հողամասին և շինությանը տալ հասցե. Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց N 145:
4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2019թ. Հունվարի 17

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 2-Ա

ԳՈՒՐԳԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումով, նկատի ունենալով, որ հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների կազմում, կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով շինության տեխնիկական վիճակի վերաբերյալ դրական եզրակացությունը, որ բավարար է անվտանգ շահագործման համար և սեփականատեր Գուրգեն Հարությունյանի 2018 թվականի դեկտեմբերի 26–ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Օրինականացնել Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղում Գուրգեն Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0045-0018 կադաստրային համարով 0.0125 հա մակերեսով տնամերձ հողամասի վրա ինքնակամ կառուցված 35.7 քառակուսի մետր արտաքին մակերեսով խանութը և մեկ ինքնակամ բացված պատուհանը՝ համաձայն «Կարեն Մաչանյան,, Ա/Ձ-ի կողմից տրված շինությունների հատակագծի:
2. Ինքնակամ կառույցի օրինականացման համար վճարը 1 քառակուսի մետրի համար՝ 5200 դրամ, մեկ բացված պատուհանը՝ 5200 դրամ,վճարման ենթակա գումարը կազմում է 190 840 (հարյուր իննսուն հազար ութ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:
3. Հողամասին և շինության հասցեն թողնել անփոփոխ. Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց N 98/1:
4. Օրինականացման համար սահմանված վճարը որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում պետք է վճարվի Փարաքար համայնքի վարչական եկամուտների 900325191154 հաշվեհամարին, չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
5. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. .....
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թվականի N 3-Ա

ԲԱՐԵՂԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 202 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի ,,Փարաքարի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին,, 15-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Բարեղամ Հարությունյանի 2019 թվականի հունվարի 9-ի դիմումը, *որոշում եմ.*

1.Բարեղամ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար համայնքում գտնվող 0.0058 հա մակերեսով բնակավայրի արտադրամասի կառուցապատման համար հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակավայրի խառը նշանակության հող:
2. Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն. սույն՝ 0.0058 հա մակերեսով հողամասը ներառել բնակավայրի խառը կառուցապատման հողերի հաշվեկշռում:
3.Հողամասին տալ հասցե.Արմավիրի մարզ, գ.Թաիրով, Մայրաքաղաքային փողոց թիվ 8/3:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. .....
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ՀՈՒՆՎԱՐԻ 2019թվականի N 4-Ա

ՍԱՐԳԻՍ ՀՈՎՍԵՓԻ ԲԱՂՐԱՄՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի չորրորդ մասով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի ,,Փարաքարի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին,, 15-Ն որոշմամբ, նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, շենքի տեխնիկական վիճակը բավարար է անվտանգ շահագործման համար, չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով սեփականատեր Սարգիս Հովսեփի Բաղրամյանի 2019 թվականի հունվարի 17 –ի դիմումը. որոշում եմ՝

1. Սարգիս Հովսեփի Բաղրամյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-060-024 կադաստրային ծածկագրով Արմավիրի մարզի Փարաքար գյուղի Երևանյան փողոց թիվ 86/1 հասցեում գտնվող 0.03084 հա մակերեսով բնակավայրի հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակավայրի բնակելի կառուցապատման հող:
2. Հողամասում առկա 169.5 քառակուսի մետր մակերեսով հացի փռի գործառական նշանակությունը փոխել որպես բնակելի տուն:
3. Բնակելի տանը և տնամերձ հողամասին տալ հասցե. Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Երևանյան փողոց N 68/1:
4.Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության ԱԳԿԿ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
5.Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել վարչական կարգով Փարաքար համայնքի ղեկավարին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ.

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թվականի N 5- Ա

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով սեփականատեր Գագիկ Արևյանի 2019 թվականի հունվարի 25- ի դիմումը. *Որոշում եմ՝*

1. Գագիկ Արևյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող 04-094-0085-0069 կադաստրային համարով (սեփականության իրավունքի վկայական N 09012019-04-0002, տրված 09.01.2019.) և 04-094-0085-0070 կադաստրային համարով (սեփականության իրավունքի վկայական N 09012019-04-0016, տրված 09.01.2019 թ.) հողակտորների միավորումից առաջացած անշարժ գույքին՝համաձայն ,,Էրգիր,, ԲԲԸ-ի կողմից տրված հողամասի հատակագծի, տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Սարի թաղի փողոց 1-ին փակուղի N 4:
2.Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. հունվարի 29

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թվականի N 6--Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 13-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության <<Քաղաքացիական պաշտպանության պլանների մշակման կարգը սահմանելու>> 2004 թվականի ապրիլի 22-ի N 633-Ն որոշման 7-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանարապետության օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2019 թվականի հունվարի 25-ի N 01/29/00362-2019 գրությունը. *որոշում եմ՝*

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքում ստեղծել քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ՝ համաձայն հավելված 1-ի և հաստատել կազմավորումների ցանկը՝ համաձայն հավելվածի 2-ի:
2.Որոշման մեկական օրինակ հանձնել կազմավորումների հրամանատարներին:
3. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի 2017 թվականի փետրվարի 16-ի «Քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ ստեղծելու մասին» N 13-Ա որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019 թ. հունվար 30
գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թվականի N 7-Ա

ԲԱՐԵՂԱՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՄԻԱՄՆԱԿԱՆ ՀԱՍՑԵԻ ՈՐՈՇՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքարի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի մարտի 28-ի „Փարաքարի գյուղական համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագիծը հաստատելու մասին„ 15-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Բարեղամ Հարությունյանի 2019 թվականի հունվարի 30-ի դիմումը. *որոշում եմ՝*

1. Բարեղամ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղի Մայրաքաղաքային փողոցի N 8/6 հասցեի 04-094-0087-0249 կադաստրային համարում գտնվող 0.0619 հա մակերեսով բնակավայրի կառուցապատման համար հողամասի գործառնական նշանակությունը փոխել որպես բնակավայրի խառը նշանակության հող:
2. Փարաքար համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն. սույն՝ 0.0619 հա մակերեսով հողամասը ներառել բնակավայրի խառը կառուցապատման հողերի հաշվեկշռում:
3. Բարեղամ Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Թաիրով գյուղում գտնվող 04-094-0087-0249 կադաստրային համարով (սեփականության իրավունքի վկայական N 31012019-04-0004, տրված 31.01.2019թ.) և 04-094-0087-0245 կադաստրային համարով (սեփականության իրավունքի վկայական N 30012019-04-0053, տրված 30.01.2019 թ.) հողակտորների միավորումից առաջացած անշարժ գույքին՝ տալ մեկ միասնական հասցե. Հայաստանի Հանրապետության, Արմավիրի մարզ, գյուղ Թաիրով, Մայրաքաղաքային փողոց N 8/3:
4. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի գրանցման միասնական ստորաբաժանման կողմից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ

2019թ. հունվար

գ.Փարաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ. Փարաքար, Նաիրի փ. 42, 0231 6-00-42, 060-53-00-42 paraqar.armavir@mta.gov.am

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

08 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թվականի N 1-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N 01/05/6726-18 գրությունը՝ համայնքում գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման վերաբերյալ. *կարգադրում եմ՝*

1.Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնաժողովին (Ա.Թևոսյան) ՝2019 թվականի հունվարի 1-15-ն ընկած ժամանակահատվածում իրականացնել գյուղատնտեսական կենդանիների համատարած հաշվառման աշխատանքները և մինչև 2019 թվականի հունվարի 15-ն ամփոփ հաշվետվությունը ներկայացնել վիճակագրական ծառայությանը: .

3.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

2019թ. հունվար 08

գ.Փարաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի
Փարաքարի համայնքի ղեկավարի
2019 թվականի հունվարի 8-ի
թիվ1-Ա կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝ Սարդուր Թևոսյան – համայնքի ղեկավարի տեղակալ

անդամներ՝

Սարիբեկ Օհանյան - համայնքապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի պետ

Արամ Սարգսյան - համայնքապետարանի աշխատակազմի ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ

Ալբերտ Զաքարյան- Փարաքար համայնքի անասնաբուժ

Հրաչ Մկրտչյան - Փարաքար գյուղի բնակիչ

Աշխատակազմի քարտուղար Մ.Քեյան